

Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies 1 [and 2]: Tehran, Aleppo, Istanbul, and Beirut, edited by Hidemitsu Kuroki, Studia Coluturæ Islamicae # 102 & 107, MEIS Series # 19 & 23, Tokyo University of Foreign Studies, Tokyo, Tenri Jihosha Co., 2015 & 2018, 192 & 272 pages.

Չին եւ ճափոնական հետաքրքրութիւնը՝ Միջին Արեւելքի նկատմամբ սկսաւ ուշագրաւ զարգացումներ ապրիլ մանաւանդ անցնող երկու տասնամեակներուն: Այս հետաքրքրութիւնը թերեւս ունի տնտեսաքաղաքական ենթահող: Այդուհանդերձ ան չի դրսեւորուիր միայն այդ բնագաւառով: Արդարեւ, այս զոյգ պետութիւնները յատկանշական 'թափանցումներ' կը կատարեն նաեւ շրջանի ժողովուրդներու անցեալի եւ ներկայի ընկերամշակութային, կրթահոգեբանական եւ մարդաբանական գիտութիւններու ուսումնասիրութեան այլեայլ բնագաւառներ:

Այս ենթահողին վրայ պէտք է դիտարկել *Human Mobility and Multiethnic Coexistence in Middle Eastern Urban Societies* երկհատորեակը, որ լուսարձակի տակ կ'առնէ Թեհրանը, Հալէպը, Իսթանպուլը եւ Պէյրութը:

Առաջին հատորը բերքն է 2010-13 եռամեայ ուսումնասիրական ծրագրին, զոր կը հովանաւորէր Արտասահմանեան Ուսումնասիրութիւններու Թոքիոյի Համալսարանը: Երկրորդ հատորը արդիւնքն է նոյն ծրագրի երկրորդ՝ 2013-16 հանգրուանին, որ կայացած է Ճափոնի Միջին Արեւելեան Ուսումնասիրութիւններու Կեդրոնին մէջ, Պէյրութ:

Միջին Արեւելքը ԺԹ. դարավերջէն իվեր, անելի քան հարիւրամեակ մը ահա, կը զատորոշուի (եւ կ'ենթարկուի) – ի թիւս այլեայլ երետյութներու – նաեւ ժողովրդագրական շեշտակի մակընթացութիւններով: Այլ խօսքով, 1880ականներէն սկսեալ, շրջանի մեծ քաղաքներուն բնակչութեան բոլոր էթնիք, կրօնական, համայնքային, մշակութային թէ այլապէս առանձնացող հաաքականութիւնները (որոնք կ'ապրէին եւ գոյացուցած էին դարերու ընթացքին ձեւաւորուած կենցաղա-մշակութա-կրօնա-քաղաքական փոխյարաբերութեան կայուն իրավիճակ մը) արձանագրեցին թուային ոչ-նոյնօրինակ աճեր, ենթարկուեցան զանազան տեսակի գործօններու, որոնց բերմամբ անոնց ներկայութիւնն ու դերը իրենց բնակած տարածութիւններուն մէջ կրեցին վճռական փոփոխութիւններ: Միւս կողմէն, նոյն այս հաաքականութիւնները կը յատկանշուին շեշտակի ասանդապահութեամբ: Այս երկու գործօններուն խաչաձեւումներէն յառաջացող գիտական հարցադրումն է որ այս երկհատորեակը կը ջանայ բարձրացնել:

Յիրափ, երկհատորեակը գիտական հարցադրումի, սերտողութեան եւ ուսումնասիրութեան նիւթ դարձուցած է թէ ի՞նչպէս ասանդապահ այս տարբեր հաաքականութիւնները, որոնք թուային - հետեւաբար նաեւ աշխարհագրական, մշակութային եւ քաղաքատնտեսական - տարածքներ

տարածուելով կամ ամփոփուելով ուժական շփումի մէջ մտան այլ հաւաքականութիւններու հետ, ինչպէս շարունակեցին իրենց գոյակեցութիւնը (դրացի)՝ այլոց՝ հետ, եւ թէ ինչպէս շարունակեցին կիրառել իրենց ասանդապահութիւնը, իրենց սովորոյթներն ու ասանդութիւնները, իրենց իւրօրինակ կենցաղը, մշակութային դրսեւորումները: Ասոնց՝ կեանքը՝ ինչ ընթացք, փոփոխութիւններ ստացաւ, ինչպէս, ինչու...: Այս փոփոխութիւնները ինչպէս արտացոլացին քաղաքային կեանքի գանազան երեւոյթներու (ճարտարապետութիւն, արհեստներ, մշակոյթ, քաղաքային դիմագիծ եւն.) վրայ, ո՞ր նոր գործօնները ընկերամշակութային ու կենցաղաքաղական մտադրոյթի ինչ նոր հոսանքներու յառաջացման մղում տուին...: Նախկին՝ հաւասարակշռութիւնը՝ որ տասնամեակներէ ի վեր կը կազմաքանդուի ու կը վերածնուի ինչ նոր իրականութիւններ կը բացայայտէ: Դրացի այս հաւաքականութիւններու արդի գոյակեցութիւնը ինչ կը պարզէ: Իւրաքանչիւր հաւաքականութիւն ինչպէս կը դիմագրաւէ այս նոր երեւոյթները, ինչպէս եւ ինչ ուղղութեամբ կը հակադրուի-կը պատշաճի այս նոր զարգացումներուն...: Նոյնինքն՝ քաղաքը որ բնակչութեան մեծաթիւ, աննախընթաց յաւելումներ ունեցաւ եւ՝ գրաւեց՝ նոր տարածքներ, ինչպէս արձագանգեց այս փոփոխութիւններուն, ինչ՝ դրսեւորումներ արձանագրեցին քաղաքային մատակարարման համակարգերը՝ ջուր-էլեկտրակա-նութիւն-ճամփաներ-կոյուղի, շինարարութիւն, հանրային զբօսավայրեր, կրթա-դաստիարակչական-ընկերային-պետական հիմնարկներ...:

Երկհատորեակին մէջ տեղ գտած ուսումնասիրութիւնները նոյն ելակէտային հարցադրումներուն կը մօտենան տարբեր գիտաուսումնական եւ ժամանակագրական առումներով, հետաքրքրութիւններու նախասիրութիւններով:

Յօդուած-ուսումնասիրութիւնները լուսարձակի տակ կ'առնեն.-

- Քաճարական շրջանի Թեհրանի գաղթն ու գոյակեցութիւնը, նոյն շրջանի ոչ-խլլամներու շարիաթական դատավարութիւնները, ինչպէս նաեւ գաղթի ու հասարակութեան տնտեսական դիրքի շարժունակութիւնն ու քաղաքական բաժանումները:
- Գահիրէի արուարձաններուն ընկերամշակութային դերը, ինչպէս նաեւ արդի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ընկերային ձեւափոխումները՝ արտագաղթի գործօնի բերմամբ:
- Օսմանեան Հալէպի բազմակրօն գոյակեցութիւնը ըստ ԺԶ. դարու դատիրաւական չորս տոմարներու, նաեւ՝ քրիստոնեայ հաւաքականութիւններուն եւ կրօնական կալուածներու անդրսահմանային դերն ու 1840ականներու դրսեցիներու դերն ու տեղը, ԺԹ. դարակէսի Հալէպի բնակչութեան մարդահամարն ու հետեւութիւնները, ԺԹ. դարավերջի Հալէպի քաղաքաշինութիւնն ու ատոր հետեւանքային զարգացումները, ինչպէս նաեւ գաղութատիրական մտադրոյթի հաստատումը Հալէպի մէջ՝ քաղաքաշինութեան գործօնի բերմամբ:

- Իսթանպուլի 1730-54 շրջանի խառնաշփոթին յաջորդող խաղաղության շրջանը եւ հանրային ու համայնքային աշխարհագրական տարածքներու վերածնունդը. քաղաքին ԺԸ.-ԺԹ. դարերու յոյն-օրթոտոքսներու ժողովրդագրական արձանագրութիւնները, ԺԹ. դարու Պէյօղլուի հայութիւնը. իսթանպուլահայութեան 1860-70ականներու քաղաքական մասնակցութեան փորձը, ինչպէս նաեւ գաղութահայ կազմաւորումներուն յառաջացման եւ խորհրդային Հայաստանի հանդէպ կեցուածքները:
- Միջինարեւելեան քաղաքականութիւնն ու Պէյրութի միջհամայնքային յարաբերութիւնները, նաեւ՝ քաղաքացիական պատերազմը եւ Պէյրութի մասին յիշողութիւնը եւ յուշագրութիւնը, նաեւ՝ քաղաքացիական պատերազմի պատմագրութիւնն ու գոյակեցութեան հեռանկարները, նաեւ՝ ո՛վ է պէյրութցին. ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբի Պէյրութի մարոնիթները, նաեւ՝ Պէյրութի քրիստոնեաներու '1903ի ջարդի' վերատեսութիւնը, նաեւ՝ խոհանոցին աւանդներուն անցումը գիւղէն քաղաք:

Հատորներուն շեշտակիօրէն ճափոնական միակ ուսումնասիրութիւնը նուիրուած է քաղաքաշինութեան ճափոնցի մասնագէտ Կիոճի Պանշոյայի (1930-1998) Միջին Արեւելքի քաղաքաշինութեան աւանդին:

24 աշխատութիւններու այս համադրումը խճանկարային արտացոլումն է միջինարեւելեան ժողովուրդներու եւ հաւաքականութիւններու գոյակեցութեան: Որոշ է որ ո՛չ նիւթերը եւ ո՛չ ալ անոնց բովանդակութիւնը կը յաակնին միջինարեւելեան համապարփակութեան: Այդուհանդերձ, հատորները յաջող իրագործումներ են հասարակագիտական քարտիզագրումը կատարելու միջինարեւելեան ժողովուրդներու համակեցութեան, ընկալումին եւ մտադրոյթին:

Մեծապէս գնահատելի եւ ողջունելի այլ երեսոյթ մըն է հայ տարրին ուսումնասիրական ներգրաւումը այս համապատկերին մէջ: Արդարեւ, փոքրամասնութիւն կը կազմեն միջինարեւելեան համապարփակութիւն ունեցող այն ուսումնասիրական ձեռնարկները, ուր տեղ գտած են նաեւ Միջին Արեւելքի հազարամեակներու պատմութեան բաղադրիչ, 'միջինարեւելքի' հայութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ:

Այս առումով, հայագիտութիւնը պարտի երկու ուղղութեամբ անելի արդիւնաւէտ գործել:

Ա) Նեղ-հայագիտական ուսումնասիրութիւններու պարագային ընդգրկել շրջանային ենթահող:

Բ) Միջին Արեւելքի այլեայլ երեսոյթներու վերաբերող ուսումնասիրութիւններու գիտական խճանկար ընդգրկել հայկական 'խիճ'ը եւս:

Անդրանիկ Տազէսեան
adakessian@haigazian.edu.lb